

2011 թվականի հուլիսի 26-ին ժամը 11.30-ին կայացած՝ Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նիստի

---

**Քաղ. Երևան  
Մասնակցում էին՝**

Ա. Ղարիբյան	ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդական, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի փոխնախագահ
Կ. Մինասյան	ՀՀ Էկոնամիկայի նախարարի տեղակալ
Ս. Պետրոսյան	ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ
Ռ. Հարությունյան	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Ա. Գրիգորյան	Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար
Հ. Մուսայելյան	«Մինոփսիս Արմենիա» ընկերության գլխավոր տնօրեն
Կ. Վարդանյան	«Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ԻԱՄ-ի գործադիր տնօրեն
Գ. Կարապետյան	«Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի նախագահ
Հ. Ֆարամազյան	«Ջի Էն Սի-Ալֆա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Մ. Մարկոսյան	«Երևանի կապի միջոցների ԳՀԻ» ՓԲԸ-ի խորհրդի նախագահ
Ռ. Վարդանյան	«Քվանտ» վարժարանի տնօրեն
Ռ. Աղզաշյան	Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի պրոռեկտոր
Գ. Խաչատրյան	«Սմարտ-Տեխ» ՍՊԸ գլխավոր տնօրեն
Ա. Կարապետյան	«Սոֆտլայն Ինտերնեշնլ Արմենիա»-ի տնօրեն
Ռ. Կասարաջյան	«Այքան Քոմունիքեյշնս» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
Հ. Եսայան	«Յուքոմ» ՍՊԸ-ի տնօրեն

**Հրավիրվածներ՝**

Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Հ. Հունանյան	ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության պետի տեղակալ

Վ. Դանիելյան	ՀՀ էկոնամիկայի նախարարի խորհրդական
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Մ. Փաշայան	ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ՏՏ վարչության պետ
Ս. Առաքելյան	ՀՀ Կենտրոնական բանկի ՏՀՏ բաժնի պետ
Կ. Աստոյան	ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների սպասարկման հարկման ընթացակարգերի բաժնի պետ
Ա. Հարությունյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության առաջատար մասնագետ
Ա. Քուչուկյան	«Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի գլխավոր ինժեներ
Ա. Բալդրյան	«Յունիքոմի» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Հ. Խանջյան	«Բի Լայն» ՍՊԸ-ի նախագահ
Գ. Չուգասազյան	«Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» ՀԿ նախագահ
Հ. Ավագյան	«Հայփոստ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
Փ. Գաստինե	«Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ի ֆինանսական տնօրեն
Դ. Սանդուխյան	«ԱրմենՏել» ՀԶ ՓԲԸ-ի իրավաբանական տնօրինության տնօրեն
Վ. Մասարաջյան	«Վիասֆեր Տեխնոպարկ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Ա. Ալեքսանյան	«Արմինկո» ՍՊԸ տնօրեն
Լ. Կապոյան	«Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ի ֆինանսական ծրագրի համակարգող
Ժ. Ազիզյան	«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի ծրագրի ղեկավար
Ա. Մելիքյան	«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի իրավաբան
Ա. Սարգսյան	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի ՏՏ ԶԱԽ քարտուղարության առաջատար մասնագետ
Մ. Սարգսյան	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի ՏՏ ԶԱԽ քարտուղարության առաջատար մասնագետ

Մ. Մելիքյան

«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի հասարակայնության հետ կապերի մասնագետ

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նոր ռոտացիոն կազմի ներկայացում

-----  
(Ա. Գրիգորյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց`** ընդունել ի գիտություն Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանի հաղորդումը` Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նոր կազմի մասին:

2. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ նիստի հանձնարարականների կատարման ընթացքի մասին

-----  
(Ա. Գրիգորյան, Վ. Դանիելյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց`** հանձնարարել ՀՀ Էկոնոմիկայի նախարար Տ՝ Դավթյանին` մեկամսյա ժամկետում

1) աշխատանքային խմբում, շահագրգիռ ընկերությունների ներկայացուցիչների հետ համատեղ, ևս մեկ անգամ քննարկել Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի 2011 թվականի ապրիլի 8-ի նիստի արձանագրության 5-րդ կետով տրված հանձնարարականի կատարման հետ կապված (դեբետ-նոթ և կրեդիտ-նոթ մեթոդների ներդրման, հաշիվների ուղղման կամ անվավեր ճանաչման) հարցը և փոխհամաձայնեցված առաջարկը ներկայացնել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին:

2) ՏՏ ոլորտի ընկերությունների կողմից կադրերի պատրաստման և վերապատրաստման նպատակով կատարված ծախսերի ծախսագրման սահմանաչափը որոշելու նպատակով ուսումնասիրել ԱՊՀ անդամ երկրների համանման փորձը, ըստ այդմ գնահատել դրա ռիսկայնության աստիճանը և արդյունքները ներկայացնել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին:

3. 2010 թվականի դեկտեմբերին «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից բարձրացված խնդիրների` «ԱրմենՏել» ՓԲԸ-ի սեփականությունը հանդիսացող Էլեկտրոնային հաղորդակցության մարտիաների, գծալարերի և կապի ենթակառուցվածքների մաս կազմող այլ սարքավորումների հափշտակությունների, ինչպես նաև կապի կազմակերպման համար վարձակալական հիմունքներով պետական և համայնքային հողերի, շենքերի և շինությունների օգտագործման դեպքում առաջացող խնդիրների մասին

-----  
(Դ. Սանդուխյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հանձնարարել ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետ Ա. Սարգսյանին՝ գունավոր և սև մետաղների ոլորտում ուժեղացնել հսկողությունը հափշտակությունների դեպքերի թիվը նվազեցնելու համար.

2) հանձնարարել ՀՀ արդարադատության նախարար Հ. Թովմասյանին, ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանին և ՀՀ կառավարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանին՝ գունավոր և սև մետաղների թափոնների հանձման կարգը դարձնել առանձին քննարկման առարկա և ըստ այդմ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ներկայացնել առաջարկություն գունավոր և սև մետաղների ոլորտի ընկերությունների կողմից անօրինական (հափշտակված) ձեռքբերումների սահմանափակման մեխանիզմների վերաբերյալ:

4. Էլեկտրոնային առևտրի իրականացման համար անհրաժեշտ օրենսդրական դաշտի կարգավորման խնդիրների մասին

-----  
(Կ. Վարդանյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) ձևավորել միջգերատեսչական հանձնաժողով՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, «Հայփոստ» ՓԲԸ-ի և այլ շահագրգիռների մասնակցությամբ.

2) մասնավոր հատվածի բոլոր շահագրգիռ կազմակերպություններին՝ միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու ցանկության դեպքում, մեկամսյա ժամկետում դիմել ՏՏԶԱ Խորհրդի քարտուղարություն.

3) հանձնարարել միջգերատեսչական հանձնաժողովին՝ 2-ամսյա ժամկետում քննարկել էլեկտրոնային առևտրի ոլորտում առկա բոլոր վիճահարույց հարցերը (բիզնես-գործընթացներ) և ըստ այդմ ներկայացնել առաջարկություններ:

5. Այլ հարցեր

-----

**Քննարկումներից հետո որոշվեց՝** ընդունել ի գիտություն՝

1) որ էլեկտրոնային գրքի հրատարակմանը նվիրված միջոցառումները կներառվեն «Երևանը՝ գրքի մայրաքաղաք» միջոցառման անցկացման ժամանակացույցում.

2) «Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի գլխավոր ինժեներ Ա. Քուչուկյանի զեկույցը.

3) հանձնարարել «Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի գլխավոր ինժեներ Ա. Քուչուկյանին՝

ա. համագործակցելով ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ, միջազգային չափանիշներին համապատասխան համակարգչային գիտելիքների հավաստման վկայականներ տրամադրելու նպատակով հիմնել ասոցիացիա,

բ. համացանցում թարմացնել հանրակրթական դպրոցների համակարգիչներով և ինտերնետ կապով ապահովման մասին տեղեկատվությունը.

4) ՏՏ ՋԱԽ-ի բոլոր անդամներին՝ այսուհետ ՏՏ ոլորտի հետ առնչվող բոլոր հարցերը ներկայացնել ՏՏ ՋԱԽ-ի քննարկմանը, քանի որ տվյալ խորհրդի ձևավորման հիմնական առաքելությունը կայանում է ոլորտում առկա խնդիրներին լուծում տալը և ՏՏ ՋԱԽ-ի նախագահի կողմից դրանց մասին ՀՀ Նախագահին զեկույցելը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՋԱՐԳԱՅՄԱՆՆ

ԱԶԱԿՑՈՂ ԽՈՐՀՐԴԻ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ